

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Վրահայոց թեմի առաջնորդ տ. Գեորգ եպս. Սերայդարյանը 1978 թվականի փետրվար 21 թվակիր իր գրությամբ Վեհափառ Հայրապետին հաղորդում էր վրահայոց թեմում 1977 տարվա ընթացքում կատարված եկեղեցական վերանորոգչական հետևյալ աշխատանքների մասին:

Նորահայտ որմնանկար Թբիլիսիի ս. Գեորգ Մայր եկեղեցու արևելյան մասի առաստաղին: Հայտնաբերված 1977 թ. եկեղեցու վերանորոգության ժամանակ

Վեհափառ Տե՛ր.

1977 թվականը վրահայոց եկեղեցիների համար եղավ վերանորոգության տարի: Եկեղեցիների գործադիր մարմինների նախագահները 1977 թվականի սկզբին կատարեցին եկեղեցիների մասնակի և ամբողջական վերանորոգություններ՝ ըստ հետևյալի.

Ախալցխայի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Ներքին և արտաքին մասնակի վերանորոգություններ, որոնք լրիվ ավարտված են: Կատարված է նաև եկեղեցու ճանապարհի նոր մայթի կառուցումը եկեղեցու ծախսով:

Ախալքալաքի ս. Խաչ եկեղեցի

Այս եկեղեցու արտաքին վերանորոգությունները, ինչպես նաև շրջակայքի բարեզարդումը կատարվեցին տեղական իշխանության ծախսով: Վերացվեցին եկեղեցու շրջակայքում գտնվող խարխլված տները և նրանց փոխարինեցին ծաղկանոցները: Բարեզարդ եկեղեցին այժմ գոհարի նման նոր շուք է տալիս քաղաքին:

Եկեղեցու միջոցներով կատարվեցին միայն ներքին խիստ անհրաժեշտ մասնակի վերանորոգություններ: Մնում է միայն ջեռուցման հարցը, որը նույնպես կլուծվի այս տարի կենտրոնական ջեռուցում անցկացվելու միջոցով:

Թբիլիսիի ս. Էջմիածին եկեղեցի

Վերջին անգամ վերանորոգվել է 1945 թվականին: Եկեղեցու պատասխանատու անձինք և հավատացյալներից ոմանք խնդրեցին չփոխել եկեղեցու ներքին տեսքը: Եկեղեցու վերանորոգության ներքին և

արտաքին աշխատանքները կատարվել են ըստ հետևյալի.

1. Էլեկտրական լարերի անցկացում պատերի միջով.

2. Ներքին պատերի յուղաներկ վերանորոգություն.

3. Որմնանկարների մաքրում.

4. Սեղանի մարմարապատում.

5. Եկեղեցու ներքին արևմտյան մասի հատակի պարկետապատում.

6. Վերնատան նորոգություն և պարկետապատում.

7. Եկեղեցու տանիքի թիթեղապատում (~հնկե թիթեղներով):

Գնված են նաև վայելուչ մոմակալներ, մեկ բյուրեղապակյա ջահ և մեկ էլեկտրական երգեհոն:

Պատերի ներկման գլխավոր աշխատանքները կատարեցին 1945 թվականին եկեղեցին վերանորոգող երկու վարպետները:

Թբիլիսիի ս. Գևորգ Մայր եկեղեցի

Եկեղեցու վերանորոգության սկզբնական աշխատանքների ժամանակ մասնագետները, պատերի յուղաներկի հին շերտերը մաքրելիս, հայտնաբերեցին հայկական ոճով գեղեցիկ մեծադիր որմնանկարներ: Եկեղեցու պատերի կեսը քերվեց և հայտնաբերվեցին տասը այդպիսի մեծ որմնանկարներ: Պարզվեց նաև, որ նախկինում պատերի ֆոնը նկարված է եղել տուֆ քարերի շարվածքի ձևով: Որոշվեց եկեղեցուն տալ նորահայտ պատմական տեսքը, և մասնագետները վարպետությամբ լույս աշխարհ բերեցին անթեղված, մոռացված հոգևոր հարստությունները:

Եկեղեցու կեսը, արևելյան պատից մինչև գմբեթի արևմտյան կողմը, լրիվ վերանորոգված է: Տասը որմնանկարները թարմացվեցին կտավատի յուղով, իսկ թափված տեղերը լրացվեցին վերանորոգությամբ:

Նորահայտ տասը որմնանկարները հետևյալներն են.

1. Ս. Սեղանի կիսակլոր առաստաղին՝ Քրիստոսը բազմած ամպերի վրա, ձեռքին՝ մագաղաթ. «Գնացէք, այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս» գրությամբ: Երկնքում՝ աղավնակերպ ս. Հոգին և սերովբեներ:

2. Ս. Սեղանի կամարի ձախակողմյան մասում՝ ս. Աբգարի որմնանկարը՝ Քրիստոսի անձեռագործ դաստառակը ձեռքին: Կա նաև հայերեն արձանագրություն. «Սուրբ Աբգար նախահաւատ թագաւոր հայոց»:

3. Ս. Սեղանի կամարի աջակողմյան մասում՝ սուրբ Տրդատի որմնանկարը: Արձանագրությունն է. «Սուրբ Տրդատ անդրանիկ թագաւոր հայոց»:

Նորահայտ որմնանկար Թբիլիսիի ս. Գևորգ Մայր եկեղեցու վերանորոգության ժամանակ. 1977 թ.

4. Հյուսիսային պատի կամարին՝ երկու զույգ սերովբեներ երկնքում:

5. Հյուսիսային պատի արևմտյան մասում՝ Ավետումը (ս. Կույս Մարիամի):

6. Հուսիսային պատի արևելյան մասում՝ Եղիսաբեթը ողջունում է սուրբ Մարիամ Աստվածածնին:

7. Հյուսիսային կամարի արևմտյան մասում՝ սաղմոսասացն Դավթի հալածումը Սավուղ թագավորից:

8. Հարավային պատի կամարին՝ երկու զույգ սերովբեներ երկնքում:

9. Հարավային պատի արևելյան մասում՝ Քրիստոսի Ծնունդը:

10. Հարավային պատի արևմտյան մասում՝ Քրիստոսի Մկրտությունը:

Առայժմ (եկեղեցու առաջին կեսից) հայտնաբերված վերոհիշյալ տասը մեծադիր որմնանկարները ավելացան տասնութ մեծադիր այլ որմնանկարներին, որոնցից չորսը պատկանում է նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի վրձնին:

Նոր հայտնաբերված որմնանկարների ոճից ելնելով, մասնագետները ճշտեցին, որ դրանք պատկանում են Հովնաթան Հակոբի Հովնաթանյանի վրձնին, 18-րդ դար:

Վերանորոգչական աշխատանքները շարունակվում են: